ԴԵՊԻ ՍՄԿԿ XXVI ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

ՀՈԴՎԱԾՆԵՐ

ՆՈՐ ՓՈՒԼ ԿՈՄՈՒՆԻԶՄԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

ՍԵՐԳԵՅ ԱՄԻՐՅԱՆ

Կոմունիստական կուսակցությունը լինելով սովետական հասարակության ղեկավար և ուղղություն տվող ուժը, կատարում է երկրի տնտեսական և սոցիալական զարգացման կանխագծումները և կազմակերպում ժողովրդի պայքարը՝ դրանց իրականացման համար։ Նրա այդ կանխագծումները ժամանակի առումով կոնկրետանում ու մարմնավորվում են ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման հնգամյա պլաններում, որոնք դարձել են մեր երկրում կոմունիստական քաղաքակրթության հաստատման ճանապարհի գլխավոր ուղենիշները։ Եվ յուրաքանչյուր հնգամյակ նշանավորում է մի խոշոր առաջընթաց քայլ դեպի կոմունիզմ, մի կարևոր բնագիծ նոր հասարակարգի կառուցման համար մղվող համաժողովրդական պայքարում։

Որպես կանոն, կուսակցությունը երկրի հնգամյա ու հեռանկարային զարգացման կանխագծումները ներկայացնում է իր բարձրագույն ղեկավար մարմնի՝ համագումարի, քննարկմանն ու հաստատմանը։ 1980 թ. դեկտեմբերի սկզբին համաժողովրդական քննարկման համար հրապարակվեց կուսակցության Կենտկոմի նախագիծը՝ ՍՍՀՄ տնտեսական ու սոցիալական զարգացման 1981—1985 թթ. և մինչև 1990 թ. ընկած ժամանակաշրջանի հիմնական ուղղությունների մասին։ Ինչպես տեսնում ենք, այս անգամ կուսակցության Կենտկոմը համագումարի քննարկմանն ու հաստատմանն է ներկայացնում ոչ միայն հերթական՝ 11-րդ հնգամյակում, այլև ամբողջ 1980-ական թվականներին ՍՍՀՄ տնտեսական ու սոցիալական զարգացման հիմնական ուղղությունների նախագիծը։ Բանն այն է, որ արդի զարգացման մեծ մասշտաբներն ու առաջադրվող խնդիրների բարդությունը պահանջում են որոշել երկրի առաջընթացի ավելի երկար ժամանակահատվածի հիմնական ուղղությունները։ Որպես կարևորագույն պատմական փաստաթուղթ, կուսակցության Կենտկոմի նախագիծը դրված է համաժողովրդական լայն քննարկման, որի շնորհիվ հասարակության յուրաքանչյուր անդամ, յուրաքանչյուր աշխատավոր մասնակցում է երկրի զարգացման պլանների մշակմանը։ Սովետական մարդիկ ոչ միայն ջերմորեն հավանություն են տալիս կուսակցության մեծ կանխագծումներին, այլև իրենց կոնկրետ առաջարկություններով ուղղումներ ու լրացումներ են կատարում քննարկվող նախագծում։

ՍՄԿԿ XXVI համագումարի քննարկմանը ներկայացվող նախագծի հիմքում դրվել են կուսակցության ծրագրային գլխավոր խնդիրները, որոնք առաջադրվել են դեռևս 1960-ական թվականների սկզբին ընդունված կոմունիստական շինարարության ծրագրում։ «Առաջիկա տասնամյակը,— կարդում ենք նախագծում,—նոր խոշոր փուլ է կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծման, հասարակական հարաբերությունների զարգացման, նոր մարդու

ձևավորման գործում[1]։ Արդեն երկու տասնամյակ է, ինչ սովետական ժողովուրդը պայքարում է կոմունիստական շինարարության այս եռամիասնական խնդիրների լուծման համար։ Անցած չորս հնգամյակներից յուրաքանչյուրը մի խոշոր առաջընթաց քայլ էր այդ ուղղությամբ։

Ամփոփելով ձեռք բերված նվաճումները, կուսակցությունը նշում է կոմունիստական շինարարության գլխավոր խնդիրների կենսագործման համար ծավալվող համաժողովրդական պայքարի նոր բնագծեր։ Նախագծի առաջին բաժնում ամփոփվում են 10-րդ հնգամյա պլանի կատարման հիմնական արդյունքները, որոնք նշանակալից են ու ցուցադրում են վերջին երկու տասնամյակում կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծման և երկրի արտադրողական ուժերի արագ վերելքի ապահովման ուղղությամբ ձեռք բերված վիթխարի նվաճումները։ Դրանք առավել ակնհայտ են դառնում հետևյալ համեմատությունից. 7-րդ հնգամյակում (1961—1965) նախորդի համեմատությամբ ՍՍՀՄ-ում ազգային եկամտի բացարձակ աճը կազմել է 45, իսկ նոր ավարտված 10-րդ հնգամյակում՝ 400 մլդ. ռ։ Ամբողջ արդյունաբերական արտադրանքը 7-րդ հնգամյակում ավելացել է 84 մլդ. ռուբլով, իսկ 10-րդ հնգամյակում՝ 717 մլդ. ռուբլով, գյուղատնտեսական արտադրանքը՝ համապատասխանաբար 7,1 մլդ. և 50 մլդ. ռուբլով։ Երկրի արտադրողական ուժերի զարգացման կարևոր պայմանը կապիտալ շինարարությունն է, որի ծավալը վերջին երկու տասնամյակում աճել է 8,2 անգամ. այսինքն՝ 7-րդ հնգամյակում ժողովրդական տնտեսության մեջ կապիտալ ներդրումները կազմել են ընդամենը 77, իսկ 10-րդ հնգամյակում՝ 635 մլդ. ռուբլի։ Կատարված համեմատությունը ցուցադրում է երկրի արտադրողական ուժերի զարգացման մեծ մասշտաբներն ու նրա դինամիզմը, որոնց շնորհիվ գրեթե մեկ տասնամյակում կրկնապատկվում է երկրի տնտեսական պոտենցիալը։ Այսպես. օրինակ, 1965—1975 թթ. հիմնական ֆոնդերն ավելացել են 2 անգամ՝ 400-ից հասնելով 800 մլդ. ռուբլու։ 10-րդ հնգամյակում դրանք ավելացել են 1,4 անգամ, այսինքն՝ 320 մլդ. ռուբլով։ Նախագծից հետևում է, որ 11-րդ հնգամյակում երկրի տնտեսական պոտենցիալի նոր մեծ աճը կապահովի 1975 թ. համեմատությամբ հիմնական ֆոնդերի ավելացումը 2 անգամ։

Հիմնվելով կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծման գործում ձեռք բերված խոշոր նվաճումների, երկրի արտադրողական ուժերի անսահմանափակ վերելքի վրա, կուսակցությունը 1970-ական թվականներին առաջադրեց իր տնտեսական ստրատեգիան, այսինքն՝ որոշեց տնտեսական ասպարեզում իր պայքարի գլխավոր ուղղությունը երկարատև ժամանակաշրջանի համար։ «Ութսունական թվականներին,— կարդում ենք նախագծում,— կոմունիստական կուսակցությունը հետևողականորեն կշարունակի իր տնտեսական ստրատեգիայի իրականացումը, որի գերագույն նպատակն է ժողովրդի կյանքի նյութական և կուլտուրական մակարդակի անշեղ վերելքը, անհատի համակողմանի զարգացման պայմանների ստեղծումը՝ ամբողջ հանրային արտադրության հետագա բարձրացման, աշխատանքի արտադրողականության մեծացման, սովետական մարդկանց սոցիալական և աշխատանքային ակտիվության աճի հիման վրա»[2]։ Կուսակցության տնտեսական ստրատեգիային համա-

---

1 «Սովետական Հայաստան», 2. XII. 1980։

2 Նույն տեղում։

պատասխան էլ որոշվել են առաջիկա տասնամյակում ՍՍՀՄ-ի տնտեսական ու սոցիալական զարգացման հիմնական ուղղությունները։ Ընդ որում, տնտեսական ստրատեգիայի կերագույն նպատակը՝ ժողովրդի կենսամակարդակի անշեղ աճի ապահովումը, դիտվում է որպես հնգամյակի գլխավոր խնդիր։

Նախորդ երկու հնգամյակների (9-րդ և 10-րդ) գլխավոր խնդիրը նույնպես համարվում էր ժողովրդի կյանքի նյութական ու կուլտուրական մակարդակի հետևողական բարձրացումը։ Վերջին հնգամյակների գլխավոր խնդրի այդպիսի ձևակերպումը պայմանավորված է 1960-ական թվականների երկրորդ կեսին տնտեսական քաղաքականության մեջ կատարված շրջադարձով, որ կուսակցությունը ձեռնարկեց՝ երկրի էկոնոմիկան առավել շափով ծառայեցնելու ժողովրդի բարեկեցության հետ կապված բազմազան խնդիրների հետևողական լուծմանը։ Դեռևս սովետական իշխանության արշալույսին Վ. Ի. Լենինը գրել է. «Միայն սոցիալիզմը հնարավորություն կտա պրոդուկտների հասարակական արտադրությունն ու բաշխումը լայնորեն տարածել և գիտական նկատառումներով իսկապես ենթարկել այն նպատակին, թե ինչպես բոլոր աշխատավորների կյանքը դարձնել առավել հեշտ, և այնպես, որ նա բարեկեցության հնարավորություն ընձեռի աշխատավորներին»[3]։

Ինչպես հայտնի է, պատմական որոշակի պատճառներով երկար ժամանակ պայմաններ չկային նոր հասարակարգի ընձեռած այդ հնարավորությունները լայնորեն կիրառելու համար։ Միայն 1960—1970-ական թվականներին, երկրի տնտեսական պոտենցիալի վիթխարի աճի հիման վրա, կուսակցությունն առաջադրեց ժողովրդական մասսաների կենսամակարդակը լայն պլանով, համակողմանիորեն ու անշեղ կերպով բարձրացնելու կուրսը։ «Այլ կերպ ասած,— նշել է Լ. Ի. Բրեժնևը,— այժմ սոցիալիստական արտադրության բարձրագույն նպատակը ուղղակիորեն ու անմիջականորեն դրվում է կուսակցության պրակտիկ բաղաքականության կենտրոնում»[4]։ Որպես դրա վկայություն, նշենք, որ 9-րդ և 10-րդ հնգամյակներում ընդունվել ու իրականացվել է ժողովրդի բարեկեցությունը հետևողականորեն բարձրացնելու բազմաթիվ միջոցառումների մի ամբողջ սիստեմ, որի շնորհիվ 1970-ական թվականներին նկատելիորեն աճել է սովետական մարդկանց կենսամակարդակը։ Ահա մի քանի փաստեր. վերջին հնգամյակներում անմիջականորեն ժողովրդի բարեկեցության նպատակին է օգտագործվել, ներառյալ բնակարանային և սոցիալ-կուլտուրական շինարարության միջոցները, ազգային եկամտի մոտավորապես չորս հինգերորդականը։ Ընդ որում, 10-րդ հնգամյակում ազգային եկամտից ժողովրդի կենսամակարդակի բարձրացմանը 329 մլդ. ռուբլով ավելի միջոցներ հատկացվեցին, քան 9-րդ հնգամյակում։ Աշխատավորների նյութական պայմանների բարելավման գլխավոր միջոցը նրանց ամենամսյա աշխատավարձի աճն է, որն անցած տասնամյակում տեղի է ունեցել շոշափելի չափով. բանվորների ու ծառայողների ամենամսյա միջին աշխատավարձը 1970 թ. 122 ռուբլուց 1980 թ. հասել է մոտ 170 ռուբլու, այսինքն՝ աճել է մոտ 40%-ով։ Դա տեղի է ունեցել աշխատավորների տարբեր կատեգորիաների աշխատավարձի կարգավորման, նրանց դրույքների ու պաշտոնական ռոճիկների բարձրացման ճանապարհով։ 1970—1980 թթ. կարգավոր-

3 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 27, էջ 511։

4 Լ. Ի. Բրեժնև, Պատմական բնագիծ կոմունիզմի ճանապարհին, Երևան, 1977, էջ 6։

վեց ու բարձրացավ 106 մլն. մարդու, կամ ժողովրդական տնտեսության մեջ զբաղված բոլոր աշխատավորների մոտ 80%-ի աշխատանքի վարձատրությունը։ Ընդ որում, բարձրացվեց նվազագույն աշխատավարձը, վերացվեցին կամ նվազեցվեցին աշխատողների մի շարք կատեգորիաների աշխատավարձից գանձվող հարկերը։ Կուսակցությունն առաջադրեց և իրականացնում է ցածր և բարձր աշխատավարձերի միջև եղած մեծ տարբերությունների վերացման կուրսը։ Սպառման հանրային ֆոնդերը, որոնց հաշվին իրականացվում են անվճար կրթությունը, բժշկական օգնությունը, ծերության դեպքում նյութական ապահովությունը և այլ սոցիալական միջոցառումներ, մեկ տասնամյակում աճեցին հսկայական չափերով, հասնելով 527 մլդ. ռուբլու։ Այդ ֆոնդերից բնակչության մեկ շնչին ընկնող վճարումներն ու արտոնությունները 1980 թ. հասան 438 ռուբլու, 1970 թ. 263 ռուբլու դիմաց։

Ժողովրդի բարեկեցության աճի կարևոր ուղիներից մեկը լայն մասշտաբներով կատարվող բնակարանային շինարարությունն է. մեկ տասնամյակում (1970—1980) կառուցվել են 1 մլդ. 74 մլն. քառակուսի մետր ընդհանուր մակերեսով բնակելի տներ։ Այդ ժամանակամիջոցում բարելավվել են 106 մլն. մարդու բնակարանային պայմանները։ Այժմ քաղաքային բնակչության մոտավորապես 80%-ը ապրում է առանձին բնակարաններում։ Աշխատավորների նյութական պայմանների բարելավման ուղղությամբ ձեռնարկված խոշոր միջոցառումների շնորհիվ նրանց եկամուտներում տեղի են ունենում որակական փոփոխություններ։ Եթե դեռևս 15 տարի առաջ, մեկ շնչի հաշվով ամսական 100 ռուբլուց ավել եկամուտ ունեցող ընտանիքների թիվը կազմում էր երկրի բնակչության ընդամենը 4%-ը, ապա այսօր այն անցնում է 50%-ից։ Ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունները, եկամտի այդ չափը հնարավորություն է տալիս նյութական ապահովածությունից անցում կատարելու դեպի լիակատար բարեկեցությունը։

Ժողովրդի նյութական բարեկեցության վերելքն ամենից առաջ դրսևորվում է նրա դրամական եկամուտների աճում, որի վկայությունն է խնայողական դրամարկղներում ավանդների չափերի արագ մեծացումը. այսպես, եթե 1965 թ. երկրի խնայողական դրամարկղներում ավանդների գումարը կազմում էր 18,7 մլդ. ռուբլի, ապա այսօր այն անցնում է 130 մլդ. ռուբլուց։

ՍՄԿԿ XXVI համագումարի քննարկմանն ու հաստատմանը ներկայացվող նախագիծը ցույց է տալիս, որ կուսակցությունը նոր հնգամյակում և ամբողջ առաջիկա տասնամյակում նույնպես շարունակելու է ժողովրդի կենսամակարդակը բոլոր գծերով հետևողականորեն բարձրացնելու կուրսը։ Ելնելով ՍՄԿԿ տնտեսական ստրատեգիայից և 11-րդ հնգամյակի գլխավոր խնդրից, նախագծում առաջադրվում է ժողովրդի բարեկեցության բարձրացման նոր միջոցառումների մի ամբողջ սիստեմ։ Պահանջվում է առաջնահերթ ուշադրություն նվիրել ժողովրդական սպառման ապրանքներով բնակչության մատակարարմանը, նրա բնակարանային պայմաններին և բժշկական սպասարկմանը, աշխատանքի պայմանների բարելավմանը, սոցիալական մյուս հրատապ խնդիրների լուծմանը։ Նախատեսվում է 11-րդ հնգամյակում բանվորների և ծառայողների միջին աշխատավարձը բարձրացնել 13—16%-ով և հասցնել ամսական 190—195 ռուբլու, իսկ կոլտնտեսականներինը՝ բարձրացնել 20—22%-ով։ Այս առնչությամբ նկատենք, որ նախորդ հնգամյակներում

նույնպես կոլտնտեսականների աշխատանքի վարձատրության բարձրացումը կատարվել է ավելի մեծ չափով, քան բանվորներինն ու ծառայողներինը։ Սոցիալական այդ կարևոր քաղաքականության նպատակն է հաղթահարել աշխատավոր դասակարգերի միջև դեռևս պահպանվող էական տարբերությունները։

Որպես նորություն, նախագծում ընդգծվում է արդյունավետ դեմոգրաֆիական քաղաքականության կիրառման կարևորությունը։ Իբրև սոցիալական պարգևցման հիմնական խնդիր պահանջվում է նպաստել ընտանիքի՝ սոցիալիստական հասարակության կարևորագույն այդ բջջի ամրապնդմանը, մայրությունն աշխատանքային ու հասարակական գործունեության հետ զուգակցելու լավագույն պայմանների ստեղծմանը, բարելավել հասարակության հաշվին երեխաների և անաշխատունակների խնամքը, իրականացնել մարդկանց կյանքի տևողությունը և նրանց աշխատանքային ակտիվությունը մեծացնելու, բնակչության առողջությունն ամրապնդելու միջոցառումների սիստեմ։ Կուսակցության դեմոգրաֆիական քաղաքականության այս հրատապ խնդիրների լուծումն ապահովելու համար նախատեսվում են կոնկրետ միջոցներ։

Առաջադրելով իր տնտեսական ստրատեգիան և որոշելով նրա գերագույն նպատակը՝ ժողովրդի կյանքի նյութական ու կուլտուրական մակարդակի անշեղ ու հետևողական բարձրացումը, կուսակցությունը միաժամանակ ձեռնարկեց նրա անհրաժեշտ հիմքերի ստեղծման պլանավորված աշխատանքը։ Կատարվեց հասարակական արտադրության և հատկապես արդյունաբերության կառուցվածքի խոշոր փոփոխություն՝ նպատակ ունենալով ապահովելու ժողովրդական սպառման ապրանքների լայն արտադրություն։ Դեռևս 1960-ական թվականների երկրորդ կեսից փոփոխվեց արդյունաբերության «Ա» և «Բ» ստորաբաժանումների, այսինքն՝ արտադրության միջոցների և սպառման առարկաների արտադրության զարգացման տեմպերի՝ տասնամյակներ գոյություն ունեցող հարաբերակցությունը։ 8-րդ հնգամյակում զգալիորեն կրճատվեց այդ երկու ստորաբաժանումների զարգացման տեմպերի մեծ տարբերությունը և այն 20—25-ից հասցվեց 3%-ի։ 9-րդ հնգամյակում ժողովրդական սպառման առարկաների արտադրության համար նախատեսվեցին ավելի բարձր տեմպեր, քան արտադրության միջոցների արտադրության համար։ 10-րդ հնգամյակում այդ հարաբերակցությունը նորից սահմանվեց հօգուտ «Ա» խմբի։ 11-րդ հնգամյակում ՍՍՀՄ տնտեսական ու սոցիալական զարգացման հիմնական ուղղությունների մասին ՍՄԿԿ Կենտկոմի նախագծում նշված է. «Բնակչության համար ապրանքների արտադրության ավելացումը և դրանց որակի բարձրացումը համարել արդյունաբերության բոլոր ճյուղերի, բոլոր ձեռնարկությունների և կազմակերպությունների առաջնահերթ խնդիրը, բոլոր կուսակցական, սովետական և տնտեսական մարմինների հատուկ հոգատարության առարկան»[5]։ Նախատեսվում է արդյունաբերական արտադրանքի ամբողջ արտադրությունը հնգամյակում ավելացնել 26—28%-ով, այդ թվում արտադրության միջոցներինը՝ 26—28, իսկ սպառման առարկաներինը՝ 27—29%-ով։ Այսինքն՝ հնգամյակում ժողովրդական սպառման առարկաների արտադրությանը հաղորդվում են ավելի բարձր տեմպեր, քան արտադրության միջոցների արտադրությանը։ Եվ դա հասկանալի է. թեև 1970-ական

---

5 «Սովետական Հայաստան», 2. XII. 1980։

թվականներին լայնորեն ծավալվեց սպառման առարկաների արտադրությունը և նրա սարելական թողարկումը գերազանցեց 160 մլդ. ռուբլուց, որը գրեթե հավասար է 1960 թ. ստեղծված ամբողջ արդյունաբերական արտադրանքին, թեև մեկ շնչին ընկնող մի շարք արտադրանքների գծով (բամբակյա, բրդյա կտորների և այլն) ՍՍՀՄ-ը աշխարհում գրավում է առաջին տեղը, այդուհանդերձ, այսօրվա դրությամբ երկրում սպառման ապրանքների մատակարարումները և նրանց որակը զգալիորեն ետ են մնում բնակչության աճած մեծ պահանջմունքներից և նրա ֆինանսական հնարավորություններից։ Ահա թե ինչու ՍՄԿԿ XXVI համագումարին ներկայացվող նախագծում կուսակցությունն առաջ է քաշում պարենային մեծ ծրագիր, որը կարող է իրագործվել միայն ագրոարդյունաբերական կոմպլեքսի լայն զարգացման ճանապարհով։ «Ագրոարդյունաբերական կոմպլեքսի հիմնական խնդիրն է պարենով և գյուղատնտեսական հումքով երկրի հուսալի ապահովումը»[6],—կարդում ենք նախագծում։ Ի դեպ առաջին անգամ է, որ մի ընդհանուր բաժնի տակ կատարվում է ագրոարդյունաբերական կոմպլեքսի ճյուղերի միասնական պլանավորում, նպատակ ունենալով ապահովել պարենային ծրագրի հաջող իրականացումը։ Դա միաժամանակ պայմանավորված է այն պատմական իրողությամբ, որ երկրի զարգացման արդի փուլում արդեն որոշակիորեն ընթանում է տնտեսության երկու ճյուղերի՝ արդյունաբերության և գյուղատնտեսության մեծ սինթեզը, նրանց սերտ ներաճումը, որը կանխատեսել են Կ. Մարքսն ու Վ. Ի. Լենինը։ ՍՄԿԿ Կենտկոմի նախագիծը բովանդակում է ագրոարդյունաբերական կոմպլեքսի զարգացման ծավալուն բնութագիր. խնդիր է դնում ապահովել նրա նյութատեխնիկական բազայի զգալի ամրապնդումը, ճյուղերի միջև տնտեսական կապերի կատարելագործումը, գյուղատնտեսական մթերքների արտադրությունն ավելացնելու, նրա պահպանումը, փոխադրումը, վերամշակումը և սպառողին դրանց առաքումը բարելավելու բնագավառում նրանց հստակ փոխգործության կազմակերպումը։ Ագրոարդյունաբերական կոմպլեքսի գլխավոր ճյուղը, ժողովրդի կենսամակարդակի կարևոր հիմքը գյուղատնտեսությունն է, որի նշանակալից զարգացումը վերջին մեկ ու կես տասնամյակում ապահովվել է կուսակցության արդի ագրարային քաղաքականության կենսագործման շնորհիվ։ Այդ քաղաքականությունն առաջադրել է ՍՄԿԿ Կենտկոմի մարտյան (1965) պլենումը։ Այն ժամանակից ի վեր որակապես այլ է դարձել գյուղատնտեսության նյութատեխնիկական բազան, նորացվել և զգալիորեն աճել են հիմնական արտադրական ֆոնդերը, որոնց արժեքը նշված ժամանակամիջոցում մեծացել է մոտ 3 անգամ և 1980 թ. հունվարի 1-ի դրությամբ գնահատվում էր 223 մլդ. ռուբլի։ Ընդ որում, 1965—1979 թթ. գյուղատնտեսության էներգետիկ հզորություններն աճել են 2,5 անգամ (232-ից հասնելով 579 մլն. ձիաուժի), մեկ աշխատողի հաշվով կոլտնտեսությունների և սովխոզների էներգազինվածությունն աճել է 3 անգամ (7-ից հասնելով 23 ձիաուժի)։ Կուսակցությունը և կառավարությունը տնտեսության այդ կարևոր ճյուղի զարգացման համար հատկացնում են նյութական ու ֆինանսական վիթխարի ու հարաճուն ռեսուրսներ. միայն 10-րդ հնգամյակում այդ ճյուղին տրամադրվեց ավելի քան 170 մլդ. ռուբլի (ամբողջ կապիտալ ներդրումների 27%-ը), որը հնարավորություն տվեց արագացնել

[6] Նույն տեղում։

գյուղատնտեսության փոխադրումն ինտենսիվ զարգացման ուղի։ Ձեռնարկված միջոցառումների շնորհիվ գյուղատնտեսության համախառն արտադրանքի տարեկան միջին ծավալը 10-րդ հնգամյակում աճեց 9%-ով, իսկ 7-րդ հնգամյակի (1961—1965) համեմատությամբ՝ 1,5 անգամ։ 1965 թ. համեմատությամբ հացահատիկային կուլտուրաների տարեկան միջին բերքատվությունը մեկ հեկտարի հաշվով 10,2 ցենտներից բարձրացել է 16,3 ցենտների, բամբակինը՝ 20,6-ից 28,8, շաքարի ճակնդեղինը՝ 165-ից 242, բանջարեղենինը՝ 116-ից 154 ցենտների, 1979 թ. մեկ կովի միջին կաթնատվությունը 1965 թ. համեմատությամբ ավելացել է 362 կիլոգրամով։ Հացահատիկի տարեկան միջին համախառն բերքն առաջին անգամ գերազանցեց 200 մլն. տոննայից։ Չնայած այդ նշանակալից հաջողություններին, գյուղատնտեսությունը դեռևս լրիվ չափով չի բավարարում երկրի բնակչության արագ աճող պահանջմունքները։ Կուսակցությունը խնդիր է դնում 11-րդ հնգամյակում կայուն ու դինամիկ կերպով ընդլայնել գյուղատնտեսական մթերքների արտադրությունը՝ հիմնականում վերջինիս հետ կապելով պարենային ծրագրի իրագործումը։ Նախատեսվում է հնգամյակում գյուղատնտեսական արտադրանքի տարեկան միջին արտադրությունն ավելացնել 12—14%-ով, ընդ որում, հացահատիկի տարեկան միջին արտադրությունը պետք է հասնի 238—243, բամբակինը՝ 9,3, մսինը՝ 17,5, կաթինը՝ 97—99 մլն. տոննայի, ձվինը՝ 72 մլդ. հատի և այլն։ Այդ խնդիրների լուծումը կապվում է գյուղատնտեսության ինդուստրացման պրոցեսի արագ ծավալման հետ։ Նախագծում խնդիր է դրվում շարունակել գյուղատնտեսական արտադրության ըստ ամենայնի ինտենսիվացման կուրսը, հողագործության և անասնապահության մեջ իրականացնել պլանաչափ անցումը արտադրության ինդուստրիալ տեխնոլոգիաների։ Այդ նպատակով նախատեսվում է նոր մեծ միջոցներ հատկացնել ագրոարդյունաբերական կոմպլեքսի զարգացմանը և գյուղի սոցիալական պրոբլեմների լուծմանը։

Ինչպես ցույց է տալիս նախագծի ուսումնասիրությունը, կուսակցության տնտեսական ստրատեգիայի առանցքը (որի վրա են խարսխվում թե՛ նրա գերագույն նպատակի իրականացումը, և թե 11-րդ հնգամյակն ու տնական հեռանկարը) երկրի տնտեսական հզորության հետագա մեծացումն է, արտադրական ֆոնդերի ընդլայնումն ու արմատական նորացումը, էկոնոմիկայի հիմքի՝ ծանր արդյունաբերության կայուն հաշվեկշռված աճի ապահովումը։ Ժողովրդական սպառման առարկաների արտադրության ավելի բարձր տեմպերի նախատեսումը բոլորովին էլ չի նշանակում, թե անտեսվում է ծանր արդյունաբերության հետագա անշեղ զարգացման, երկրի ինդուստրիալ հզորության աճի ապահովման կարևորությունը, որն ընդգծվում է ՍՄԿԿ XXVI համագումարին ներկայացվող նախագծում։ Ճիշտ է, այսօր արդյունաբերական արտադրանքի ավելի քան 20 կարևոր տեսակների (այդ թվում պողպատ, երկաթաքար, ցեմենտ և այլն) արտադրության ծավալով (ՍՍՀՄ-ը աշխարհում զբաղվում է առաջին տեղը, բայց և այնպես երկրի տնտեսական ու սոցիալական զարգացման և առկա միջազգային բարդ պայմաններում նրա պաշտպանունակության ամրապնդման շահերը պահանջում են մեծացնել ինդուստրիալ հզորությունը։ 11-րդ հնգամյակում վերջինիս նախատեսվող աճի մասշտաբների մասին են խոսում հետևյալ թվերը. 1985 թ. էլեկտրաէներգիայի արտադրությունը կկազմի 1550—1600 մլդ. կիլովատ ժամ, նավթի հանույ-

բը՝ 620—645, ածուխինը՝ 770—800, սև մետաղների պատրաստի գլանված-քի արտադրությունը՝ 117—120 միլիոն տոննա։ Մեքենաշինության ու մետաղամշակման արտադրանքը կավելանա 1,4 անգամ և այլն։ Երկրի ինդուստրիալ հզորության նախատեսվող աճի աստիճանը ցույց տանք էլեկտրաէներգիայի արտադրության աճի ցուցանիշներով։ Ունենալ անհրաժեշտ էլեկտրաէներգետիկ հզորություններ և տնտեսաբար օգտագործել դրանք—ահա ժողովրդական տնտեսության հաջող զարգացման երկու կարևոր պայմանները։ Էլեկտրաէներգիայի արտադրությամբ (1980 թ. 1,3 տրիլիոն կիլովատ ժամ) Սովետական Միությունն աշխարհում գրավում է երկրորդ տեղը, զիջելով միայն ԱՄՆ-ին և արտադրում է ավելի շատ, քան եվրոպական տնտեսական ընկերակցության 9 երկրները միասին վերցրած։ 1970 թ. ՍՍՀՄ-ում արտադրվել է 740 մլդ. կիլովատ ժամ էլեկտրաէներգիա, իսկ 1985 թ. այն կհասնի 1550—1600 մլդ-ի, այսինքն 15 տարում երկրի էներգետիկ հզորությունները կկրկնապատկվեն։

Նախագծից հետևում է, որ երկրի առջև կանգնած տնտեսական և սոցիալական խնդիրները հաջողությամբ լուծելու համար այլ ուղի չկա, բացի աշխատանքի արտադրողականության արագ աճից, ամբողջ հանրային արտադրության արդյունավետության խիստ բարձրացումից։ Զարգացման այս գլխավոր ուղու վրա կուսակցության և սովետական ժողովրդի ուշադրությունը կենտրոնացրել են ՍՄԿԿ նախորդ՝ XXIV և XXV համագումարները։ Ավարտված 10-րդ հնգամյակը որակի և հասարակական արտադրության արդյունավետության բարձրացման հնգամյակ էր։ Սակայն, ինչպես նշվում է նախագծում, արտադրության արդյունավետության բարձրացման, աշխատանքի արտադրողականության աճի բնագավառում որոշակի պատճառներով չի հաջողվել խնդիրները լուծել այնպես, ինչպես նախատեսված էր պլանով։ Այսպես, օրինակ, նախատեսվել էր 10-րդ հնգամյակում աշխատանքի արտադրողականության բարձրացման հաշվին ապահովել արդյունաբերական արտադրանքի աճի 90%-ը, մինչդեռ այդ պլանը թերակատարվել է։

Շարունակելով հասարակական արտադրության արդյունավետության բարձրացման ՍՄԿԿ XXV համագումարի առաջադրած կուրսը, կուսակցության Կենտկոմի նախագիծը նոր բնագծեր է նախատեսում այդ ուղղությամբ։ 11-րդ հնգամյակում այդ կուրսն իր արտահայտությունը կգտնի այն բանում, որ աշխատանքի արտադրողականության բարձրացումը պետք է ապահովի արդյունաբերական արտադրանքի աճի ավելի քան 90%-ը, գյուղատնտեսության ու շինարարության արտադրանքի ամբողջ աճը։

Ամբողջությամբ վերցրած նախատեսվում է հնգամյակում տնտեսության բոլոր ճյուղերում հանրային աշխատանքի արտադրողականությունը բարձրացնել 17—20%-ով, դրա հաշվին ստանալով ազգային եկամտի աճի առնվազն 85—90%-ը։ Այդ խնդիրների լուծումն էապես կնպաստի ժողովրդական տնտեսության ինտենսիվ զարգացմանը, որն արդի փուլում համարվում է երկրի տնտեսական առաջընթացի գլխավոր ուղին։ Այս առնչությամբ առաջնահերթ խնդիր է դարձել գիտատեխնիկական առաջընթացի արագացումը, որը կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծման հզոր լծակն է։

Սովետների երկրի տնտեսական ու սոցիալական առաջընթացի ծրագրում առանձնահատուկ ու մեծ նշանակություն է տրվում գիտության ու տեխնիկայի

զարգացմանը, որը 11-րդ հնգամյակում պետք է էլ ավելի մեծ չափով ենթարկվի սովետական հասարակության հետագա առաջադիմության կարևորագույն պրոբլեմների լուծմանը, ինտենսիվ զարգացման ուղին էկոնոմիկայի անցման արագացմանը»[7]։ Ելնելով դրանից, նախատեսվում է ապահովել գիտատեխնիկական կարևորագույն պրոբլեմների լուծման նպատակային կոմպլեքսային ծրագրերի մշակումն ու իրականացումը, էականորեն կրճատել Նոր տեխնիկայի ստեղծման և յուրացման ժամկետները, ուժեղացնել գիտության և արտադրության փոխադարձ կապերը, ամրապնդել գիտահետազոտական և նախագծային-կոնստրուկտորական կազմակերպությունների փորձնա-արտադրական բազան, գիտատեխնիկական հեղափոխության պահանջներին համապատասխան ժամանակին որոշել և փոխել հետազոտությունների ու մշակումների ուղղությունը, գիտական հիմնարկների կազմակերպական կառուցվածքը, կատարելագործել գիտական և գիտամանկավարժական կադրերի պատրաստումը, որակավորման բարձրացումը և ատեստավորումը։ Նախագծում սահմանված են բնական ու տեխնիկական գիտությունների զարգացման ուղղությունները 11-րդ հնգամյակում։ Նախագծում լուրջ խնդիրներ են դրվում նաև հասարակական գիտությունների առջև, նրանց ջանքերը կենտրոնացնելով ՍՍՀՄ-ի տնտեսական ու սոցիալական զարգացման պրոբլեմների լուծման վրա։ Այդ կապակցությամբ հասարակական գիտությունների աշխատողներից պահանջվում է իրենց հետազոտությունները կազմակերպել գլխավորապես զարգացած սոցիալիզմի, կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծման և արտադրական հարաբերությունների կատարելագործման, հանրային արտադրության արդյունավետության բարձրացման, տեսական հարցերի մշակման ուղղությամբ, ընդլայնել գիտատեխնիկական առաջադիմության սոցիալ-տնտեսական պրոբլեմներին, ժողովրդական տնտեսության կառավարման կատարելագործմանը, ազգարարային քաղաքականությանը, ժողովրդագրությանը և աշխատանքային ռեսուրսներին վերաբերող հետազոտությունները, լայնորեն ու խորը կերպով մշակել զարգացած սոցիալիզմի սոցիալական կառուցվածքի ու քաղաքական սիստեմի, կոմունիստական դաստիարակության, մարդու սոցիալիստական ապրելակերպի համակողմանի ու ներդաշնակ զարգացման պրոբլեմները։

11-րդ հնգամյակում և առաջիկա ամբողջ տասնամյակում երկրի տնտեսական զարգացման ծրագրի իրականացման կարևոր պայմանն է արտադրողական ուժերի ճիշտ տեղաբաշխումը, որը հնարավոր է միայն միութենական հանրապետությունների հետագա մասնագիտացման և համամասնական զարգացման հիման վրա։ Նախագծում դրան նվիրված է մի մեծ բաժին, որտեղ նշվում են յուրաքանչյուր միութենական հանրապետության տնտեսության՝ որպես միասնական ժողովրդատնտեսական համալիրի բաղկացուցիչ մասի, զարգացման հիմնական խնդիրները, նրա առաջընթացի նոր բնագծերը։

11-րդ հնգամյակում զարգացման նոր ու մեծ հեռանկարներ են բացվում նաև Սովետական Հայաստանի առջև։ Նախատեսվում է այստեղ արդյունաբերական արտադրանքի արտադրությունն ավելացնել 29—32%-ով, բարձրացնել ռադիոտեխնիկական և էլեկտրոնային արդյունաբերության, գործի-

[7] Նույն տեղում։

քաշինության ու հաստոցաշինության տեսակարար կշիռը։ Շարք կմտնեն նոր հզորություններ Հրազդանի մեքենաշինական գործարանում։ Նախատեսվում է հնգամյակում կառուցել ավտոամբարձիչների գործարան և պարֆյումերիայի ֆաբրիկա, իրականացնել գունավոր մետալուրգիայի և քիմիական արդյունաբերության ձեռնարկությունների վերակառուցումը, ավարտել Իջևան—Հրազդան երկաթգծի կառուցումը և այլն։

ՍՄԿԿ XXVI համագումարի քննարկմանը ներկայացվող ծրագրային փաստաթղթի առանձին բաժնում նախատեսվում է ՍՍՀՄ-ի արտաքին տնտեսական կապերի զարգացումը, նոր ու հատուկ բաժին է նվիրվում կառավարման հետագա կատարելագործմանը, տնտեսության բոլոր օղակներում տնտեսավարման մակարդակի բարձրացմանը՝ որպես հասարակական արտադրության արդյունավետության բարձրացման կարևոր գործոնի։

Կուսակցության Կենտկոմի նախագիծը հսկայական տեսական ու պրակտիկ նշանակության փաստաթուղթ է, որտեղ ստեղծագործաբար ընդհանրացվել է ՍՍՀՄ-ում կոմունիստական շինարարության պրակտիկան, հաշվի են առնվել մյուս սոցիալիստական երկրների փորձը, ինչպես նաև մեր դարի 80-ական թվականների կոնկրետ պատմական պայմանները, և այդ հիման վրա որոշվել են կուսակցության ստրատեգիան ու տակտիկան՝ սովետների երկրի տնտեսական, սոցիալական ու հոգևոր զարգացման նոր բնագծեր նվաճելու համար մղվող համաժողովրդական պայքարում։

НОВЫЙ ЭТАП НА ПУТИ ПОСТРОЕНИЯ КОММУНИЗМА

СЕРГЕЙ АМИРЯН

Резюме

В декабре 1980 г. на всенародное обсуждение был выдвинут Проект ЦК КПСС к XXVI съезду КПСС «Основные направления экономического и социального развития СССР на 1981—1985 годы и на период до 1990 года», который должен быть представлен на утверждение XXVI съездом КПСС.

В этом документе, имеющем громадное историческое значение, отмечены новые высокие рубежи прогресса страны Советов, достижения которых знаменуют собой новый этап на пути построения коммунистического общества. В 11-ой пятилетке предусматривается увеличить выпуск промышленной продукции на 26—28%, а среднегодовой выпуск сельскохозяйственной продукции—на 12—14%; планируется рост национального дохода на 85—90%.

Основные направления экономического и социального развития страны определены в соответствии с экономической стратегией партии, главной целью которой является неуклонный рост материального и культурного уровня жизни народа. Для достижения этой цели в 11-ой пятилетке предусматривается целая система мероприятий, направленных на последовательное повышение благосостояния народа.